

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի հրաժեշտի ուղերձը

02.06.2018



Մի րեւի հայրենակիցներ: Քաղաքական զարգացումների արդյունքում ստեղծված իրավիճակին համապատասխան ես վայր եմ դրել ՀՀ Վայոց ձորի մարզպետի լիազորությունները: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ում հետ համագործակցված աշխատանք ենք տարել հանուն Վայոց ձորի մարզի տնտեսության զարգացման, հանուն վայոցձորցիների բարօրության ու խաղաղ պայմաններում կենսագործության հնարավորության ստեղծման նպատակով:

Իմ շնորհակալությունն եմ հայտնում տեղական ինքնակառավարման մարմիններին, ՀՀ գործադիր իշխանության տարածքային ծառայությունների, կրթական, մշակութային, մարզական, առողջապահական հաստատությունների ղեկավարներին, հասարակական կազմակերպությունների, մասնավոր հատվածի ներկայացուցիչներին մեր համատեղ գործունեության համար:

Շնորհակալ եմ նաև հոգևոր դասի ներկայացուցիչներին իմ գործունեության ողջ ընթացքում ամենատարբեր առիթներով համագործակցության համար:

Իմ շնորհակալությունն եմ ուզում հայտնել ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսյանին, ինձ այդ պատասխանատու պաշտոնը վստահելու համար և ՀՀ նախկին վարչապետներին ու գործադիր իշխանության ղեկավարներին համագործակցված աշխատանքի համար:

Կարծում եմ իմ պաշտոնավարման ընթացքում մարզի զարգացմանն օժանդակելու նպատակով արվել է ամեն հնարավորը և մարզի կենսագործունեության տարբեր ոլորտներում նախորդ ժամանակահատվածի համեմատած առաջընթաց է գրանցվել:

Հրաժեշտ տալուց առաջ, ուզում եմ հաջողություններ ու արդյունավետ աշխատանք մաղթել ՀՀ նորընտիր իշխանություններին և Վայոց ձորի նորանշանակ մարզպետին, ի շահ Հայաստանի Հանրապետության և ի բարօրություն մեր ժողովրդի:

Աստված պահապան ազգիս: